ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2021թ-ի հունվարի 22-ին, ժամը 12:00-ին՝ ՀՀ Ազգային ժողովի 41 պատգամավորների նախաձեռնությամբ արտահերթ նիստ գումարելուև և ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամների ընտրություն իրականացնելու վերաբերյալ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 138-րդ հոդվածով և հաշվի առնելով Սահմանադրական դատարանի 2020 թվականի մարտի 31-ի ՍԴՈ-1518 որոշումը, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը Արմեն Հայկյանցին նշանակել է Բարձրագույն դատական խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար:

Հիմք ընդունելով Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Արտաշեսի Հովհաննիսյանի կողմից 2020 թվականի նոյեմբերի 23-ին ներկայացված հրաժարականի վերաբերյալ դիմումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը կայացրել է Հայկ Հովհաննիսյանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշում:

Այսպիսով՝ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդում պետք է համալրվեն 2 թափուր տեղերը՝ իրականացնելու ՀՀ դատական համակարգի առջև ծառացած խնդիրների լուծումը:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ